Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ադրբեջանի գյուղատնտեսական կոլեկտիվների միություն
«ԱԶԿՈԼԽՈԶՑԵՆՏՐ»

338.1К
Ա-84

ԽՍՀՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(2-րդ հրատարակություն, մշակված յեվ լրացրված)

Գինն 4 15 կոպ.

Բաքու—1931

338.14
Ա-84
13.05.2013
05 JAN 2010

Ադրբեջանի գյուղատնտեսական կոլեկտիվների միություն
«ԱԶԿՈԼԽՈՉՅԵՆՏՐ»

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(2-րդ հրատարակություն, մշակված յեվ լրացրված)

2458

AZƏRNƏŞR
Բաքու — 1931

14856-17

30.333

ОТПЕЧАТАНО
в типографии
„АЗЕРНЕШР“.
Баку, Б.-Морск., № 16

Главлит 1589 Зак. 228 Тираж 1500 Ст. ф. Б⁹

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ներքին կարգավորման ներկա կանոնները մշակված են ի զարգացումն .....

.....

գյուղատնտեսական արտելի կանոնադրության և մտցրվում են նպատակ ունենալով՝ ապահովելու արտելի աշխատանքների նորմալ ընթացքը, բարձրացնելու աշխատանքի արտադրականությունը, ամրապնդելու աշխատանքային դիսցիպլինան, նույնպես և ուղիղ փոխհարաբերություններ սահմանելու արտելի անդամների և ղեկավարների միջև։

2. Ներքին կարգավորման կանոնները պարտադիր են գյուղատնտեսական արտելի բոլոր անդամների, նրանց ընտանիքների աշխատող անդամների, վարչական որդանների և ղեկավար անձերի, նույնպես և վարձու աշխատողների համար, բացառությամբ XI մասի։

II ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3. Գյուղատնտեսական արտելի տնտեսության ընդհանուր ղեկավարությունը տանում է ան-

դամների ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովը (խոշոր գյուղատնտեսական արտելներում)։

Արտելի տնտեսության ղեկավարությունը տանելու համար ընտրվում է կոլխոզի վարչություն։

4. Գյուղատնտեսական արտելներում վարչությունն ընտրվում է՝

եթե մինչև 50 տնտեսություն կա	—	3 հոգուց
» 50—100 »	» —	5 »
» 100-ից ավելի »	» —	7 »

5. Գյուղատնտեսական արտելի վարչության նախագահն իրականացնում է գյուղատնտեսական արտելի ամբողջ տնտեսության և ֆինանսների ընդհանուր ղեկավարությունը, կատարում է ամբողջ կարգադրական աշխատանքները և հսկում է արտելի բոլոր աշխատանքներին։

Վարչության մյուս անդամների միջև հավասարաչափ բաժանվում են՝ գանձապահի, քարտուղարի, աշխատանքի կազմակերպման, արտադրական-տնտեսական աշխատանքների, կազմակերպչական գործի, կուլտուր-կենցաղային աշխատանքի ղեկավարման և այլ աշխատանքները։

Ծանոթություն.—Եթե կոլխոզը 50 տնտեսությունից ավելի ունի, գյուղատնտեսական արտելի վարչության նախագահն ազատվում արտելի արտադրական աշխատանքներին մասնակցելուց. իսկ մյուս գյուղատնտեսական արտելներում նախագահն աշխատում է մյուս անդամներին համահավասար և կարող է արտադրական աշխատանքներից ազատվել միայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ։

6. Խոշոր գյուղատնտեսական արտելներում, նայած տնտեսության ճյուղերի չափին, ընտրվում են տնտեսության առանձին ճյուղերի վարիչներ (դաշտագործության, բանջարաբուծության, անասնապահության, ոժանդակ-արդյունաբերական ձեռնարկների)։

Ծանոթություն.— Խոշոր արտելներում ճյուղերի վարիչները կարող են ազատվել գյուղատնտեսական արտելի արտադրական աշխատանքներից միայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ։

III ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Արտելի տնտեսությունում աշխատանքը կատարվում է նարյադներով, համապատասխան աշխատանքների որացույցային պլանի, բրիգադային ձևով։

8. Աշխատանքներն սկսելուց յերկու շաբաթ առաջ բրիգադան ստանում է հաստատուն առաջադրություն, վորի մեջ մատնանշված է լինում աշխատանքի տեղը և ժամկետը (նարյադ)։

9. Գյուղատնտեսական արտելի անդամները պարտավոր են նարյադի համաձայն ներկայանալ նշանակած ժամին ու տեղը՝ աշխատանքների ղեկավարի ցուցմունքով, և սկսել իրենց հանձնված աշխատանքը։

10. Աշխատանքները սկսելու և վերջացնելու համար վարչությունը սահմանում է վորոշ ազդանշան (զանգ, սուլոց, դրոշակ և այլն։)

11. Անակնկալ հիվանդության դեպքում՝ հիվանդացած կոլխոզնիկը կամ նրա ընտանիքի անդամը պարտավոր է անհապաղ հայտնել այդ մասին իր բրիգադիրին կամ աշխատանքների ղեկավարին։

12. Հարբած դրությամբ աշխատանքի յեկող անձանց թույլ չեն տալիս աշխատելու։

13. Նշանակված ժամանակից առաջ ինքնակամ կերպով աշխատանքից հեռանալն արգելվում է։ Եթե անհրաժեշտ է աշխատանքից հեռանալ, աշխատողը նախապես դրա համար պետք է թույլտվություն ստանա բրիգադիրից կամ աշխատանքների ղեկավարից։

14. Եթե աշխատանքի տեղը հեռու է արտելի ագարակից, կազմակերպվում է բրիգադայի վրանային կենցաղ դաշտում և արտելային մնունդ՝ մասնակիցների փոռնային (սկլադչինա) հիմունքներով։

IV ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ

15. Արտելի բոլոր աշխատունակ բնակչությունը՝ համաձայն սեռի, տարիքի, առողջության, սովորույթների, ընդունակությունների և գիտելիքների՝ ամրացվում է աշխատանքի վորոշ ճյուղի, մի գյուղատնտեսական սեզոնից վոչ պակաս ժամանակով։

16. Աշխատանքի հաշվեառը հեշտացնելու համար՝ չպետք է թույլ տալ, վոր կոլխոզնիկն որվա ընթացքում մեկ աշխատանքից մյուսը փոխադրվի, բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության։

17. Գյուղատնտեսական արտելներում աշխատանքները կատարվում են բրիգադներ կազմակերպելու կարգով։ Բրիգադները, որինակի համար, կարող են հետևյալները լինել.—

Դաշտաբուծության վերաբերմամբ

Բրիգադա—հողը ցանքից առաջ մշակելու և ցանելու համար,

Բրիգադա—ջրողների,

Բրիգադա—բույսերը խնամողների (քաղհան, նոսրացում, կուլտիվացիա և այլն),

Բրիգադա—խոտհարքային հողամասերը հարելու,

Բրիգադա—հունձ անելու (հացահատիկները),

Բրիգադա—հացահատիկային բույսերը կալսելու,

Բրիգադա—բամբակը քաղելու։

Անասնապահության վերաբերմամբ

Բրիգադա—լծկան անասուններին խնամելու,

Բրիգադա—կթան անասունները խնամելու (տավարածներ, կթողներ, հոբթարածներ և այլն),

Բրիգադա—վոչխարները խնամելու և խուզելու,

Բրիգադա—խոզերին խնամելու։

Բանջարաբուծության վերաբերմամբ

Բրիգադա - բանջարանոցի համար հողը պատրաստելու, բանջարեղեն ցանելու և դրանք խնամելու համար,

Բրիգադա—բանջարանոցների բերքը հավաքելու համար,

Բրիգադա—ջերմոցները (պարնիկ) խնամելու համար (ջրել, ստվերարկել, ցանել, քաղհանել, բերքը հավաքել)։

Այգեգործության յեվ խաղողաբուծության վերաբերմամբ

Բրիգադա — պտղատու ծառերը խնամելու համար,

Բրիգադա—պտուղները քաղելու համար,

Բրիգադա—խաղողաքաղերը խնամելու համար,

Բրիգադա—խաղողը քաղելու համար։

V ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Արտելի ամեն մի անդամ աշխատանքը կանոնավոր պիտի կատարի, բարեխիղճ և ժամանակին, այնպես վոր աշխատանքի արտադրողականության նորման պակաս չլինի արտելի վարչության սահմանած նորմայից։

ա) Աշխատանքի համար ստացվող ինվենտարը պետք է լավ նայել և համոզվել, վոր սարքին է։

բ) Արտելի ունեցվածքին պետք է վերաբերվել խնամքով և կարգին, թույլ չտալով վոր դա փչանա։

գ) Յեթե ունեցվածքը փչանում կամ ֆնասվում է, պետք է անհապաղ հաղորդել իր ղեկավարին։

դ) Յեթե աշխատանքը կատարվում է լծկաններով, հետևել անասունների առողջությանը և թույլ չտալ, վոր նրանք ուժասպառ լինեն ու չծեծել։

յե) Աշխատանքը վերջացնելուց հետո ինվենտարն անպատճառ վերադարձնել այն անձին, վորից ստացվել է, մաքրել մեքենան և գործիքները հողից ու ցեխից, նույնպես և լծկանն ու լծասարքը հանձնել ձիապանին կամ անասնապահին։

VI ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Դաշտագործության կամ բանջարաբուծության վարիչի պարտականություններ

19. Իր ճուղի արտադրական աշխատանքային պլանը կազմել, ժամանակին ապահովել անհրաժեշտ բանվորական ուժը, կազմակերպել բանվորական բրիգադներ և նրանց հրահանգել, հետևել աշխատանքի վորակի և աշխատանքների կատարման հաշվեառումին, ժամանակին պատրաստել գյուղատնտեսական ինվենտարը դաշտային աշխատանքների համար, ժամանակին սկսել և վերջացնել դաշտային աշխատանքները։ Բավական քանակությամբ լավ սերմ և պարարտանյութեր հասցնել, նույնպես և նույթեր ու միջոցներ գյուղատնտեսական ֆնասատուների դեմ կռվելու համար։ Հետևել, վոր սերմային ֆոնդը լավ պահվի, մաքրվի, տեսակների բաժանվի, ախտահանվի։ Պատրաստել ամբարներ և բերքը պահելու ուրիշ պահեստներ։ Հետևել, վոր բերքը ժամանակին հավաքվի և դաշտից փոխադրվի։ Հետևել, վոր բոլոր ագրոտեխնիկական միջոցառումներն ուղիղ դործադրվեն՝ համաձայն պայմանագրման պայմանաթղթի։ Ղեկավարել դաշտագործության մեջ աշխատող տրակտորիստների աշխատանքը և մասնակցել գործի անելիք արտադրական նորմաների վորոշմանը։ Կազմակերպել և ղեկավարվել բույսերը ֆնասատուներից պաշտպանելու աշխատանքը։ Մասնակցել արտադրական խորհրդակցության աշխատանքին և կազմակերպել սոցմրցակցությունը

ցում, հսկել, վոր տնտեսության իր ճյուղի արտադրական պլանը ժամանակին կատարվի։

բ) Ավագ բրիգադիրի պարտականությունները

Նարյադի համաձայն աշխատանքը բաժանել բրիգադայի անդամների միջև և ղեկավարել բրիգադայի աշխատանքը՝ տնտեսության ճյուղի վարիչի ընդհանուր հսկողությամբ։ Հետևել, վոր բրիգադայի անդամներն ուղիղ ոգտագործեն գյուղատնտեսական ինվենտարը, լծկանները և ժամանակին տեղը վերադարձնեն։ Հաշվառել կատարած աշխատանքի վորակը և քանակը, հանձնել աշխատանքը տնտեսության ճյուղի վարիչին կամ վարչության նախագահին։

գ) Պահեստապետի պարտականությունները

Ընդունել, պահպանել և տալ նյութերը, մթերքներն ու ինվենտարը՝ դրա համար լիազորված անձի գրավոր պահանջագրով. պահեստի նյութերի և պաշարների յելքի ու մուտքի գիրքը պահել։ Ժամանակին հայտնել վարչությանը, թե պահեստում տնտեսության համար պահանջվող ինչ նյութեր են պակասում։ Հետևել, վոր նյութերն ու մթերքները լավ պահվեն և համապատասխան միջոցներ ձեռք առնել՝ դրանց փչանալու դեմ։

Մանր կոլխոզներում պահեստապետի պարտականությունները հանձնվում են վարչության այն անդամին, վորը տնտեսական մասի աշխատանքներն է կատարում։

դ) Դրսի պահապանի պարտականությունները

Դրսի պաշտպանություն ամբողջ ունեցվածքի՝ տնտեսության (ուսադրա) սահմաններում և պատասխանատվություն ամբարների, պահեստների ու այլ շենքերի կողպենքների անձեռնմխելիության համար։

յե) Հաշվետարի պարտականությունները

Տանել ամբողջ կոլխոզի հաշվապահությունը՝ Կոլխոզցենտրի մատնանշած ձևերով և հրահանգներով։ Կոլխոզի գործիչներին ցույց տալ, թե ինչպես պետք է կազմել հասարակ հաշվային փաստաթղթերը (աշխատանքի նարյադ, աշխատանքի հաշվառի տաբել, նյութերի պահանջագիր, պահեստապետի գիրք և այլն) և օգնել նրանց այդ աշխատանքում։

զ) Ոժանդակ-արդյունաբերական ձեռնարկների վարիչների պարտականությունները

Կազմել արտելի բոլոր ձեռնարկների արտադրական-աշխատանքային պլանը, ժամանակին ներկայացնել պահանջագիր ձեռնարկներին անհրաժեշտ բանվորական ուժի համար, հետևել կատարվող աշխատանքի վորակին, ձեռնարկների դրությանը և տնտեսավորմանը, մատակարարել ձեռնարկներին հում նյութ, վառելիք և այլ նյութեր։ Դրասենյակին փաստաթղթեր ներկայացնել՝ վառելիքի, նյութերի ծախսման, մշակված հում նյութերի, մշակած արտադրանքի և բանվորական ուժի ծախսման մասին։ Կազմակերպել սոցմրցում և մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին։

յե) Անասնապահության վարիչի պարտականություններ

Կազմել անտեսություն իր ճյուղի արտադրական աշխատանքային պլանը, հետևել աշխատանքի վորակին և աշխատողներին անհրաժեշտ ինվենտարն ու նյութերը ժամանակին մատակարարելուն։ Հաշվառել արտադրանքի վորակը և քանակը։ Ղեկավարել կերի սիլոսացումը, հետևել ու պատասխանատու լինել անասուններն ուղիղ պահպանելու և կերակրելու, ջրելու համար։ Սարքավորել անասնատները։ Գրասենյակին փաստաթղթեր ներկայացնել անասունների քանակի մեջ յեղած փոփոխությունների մասին, մասնակցել կոլխոզի անդամներից համայնացրած անասունների ընդունելուն և անասունները գնահատող հանձնաժողովի աշխատանքներին։ Հետևել, վոր անասնատների համար սահմանված բոլոր կանոնները ուղիղ և ճշտիվ կատարվեն։ Ղեկավարել ավագ անասնապահների աշխատանքը։ Մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքին, կազմակերպել սոցմրցում, կյանքում իրագործել անասունների վորակը լավացնելու և նրանց կերով ապահովելու համար ձեռնարկված բոլոր միջոցառումները, իրագործել անտեսության ավյալ ճյուղին վերաբերող՝ վարչության կողմից արված բոլոր ցուցումները։

ը) Ավագ անասնապահի (բրիգադիրի) պարտականություններ

Հետևել անասնապահների, կթողների և հովիվների պարտականությունների կատարմանը։

Ստանալ, պահպանել և տալ կերը, պատասխանատու լինել իր կարգադրության տակ յեղած դույքի և ինվենտարի համար։ Հետևել անասնատան մաքրությանը և անասունների առողջությանն ու ժամանակին հայտնել անասնապահության վարիչին՝ հիվանդանալու դեպքերի մասին։ Հետևել աղբի ժամանակին հավաքելուն և այն ուղիղ պահելուն։ Հետևվել անասունները լավ պահելուն, ժամանակին արոտ տանելուն և հետ բերելուն։ Հետևել կթնատու անասունների կթելու մաքրությանը և բեղմնավորմանը։ Հաշվի առնել կիթերը, դրանց մասին տեղեկություններ տալ անասնապահության վարիչին։ Հետևվել ծնելու ժամկետներին և դրանց մասին նախազգուշացնել անասնապահներին ու հովիվներին։

թ) Անասնապահի պարտականություններ

Բերել և պատրաստել կերը (արմատապտուղները կտրտել, քուսպը փշրել, թեփը թրջել և այլն), բաժանել կերը նորմաներով և ջրել անասունները, պատրաստել տակը վուռելու նյութը (ծղնոտը), մաքրել անասուններին և կերակրել, աղբը մաքրել և դուրս տանել դրա համար նշանակված տեղը։ Հետևվել ծնելուն։

ժ) Կթողի-կթողուհու պարտականություններ

Լվանալ ծիծն ու պտուկները՝ կթելուց առաջ, սրբել դրանք չոր, մաքուր սրբիչով։ Լիովին կթել կաթը, խնամել ծիծը, վորպեսզի նա չկոպտանա, ամանեղենը մաքուր պահել։ Մշակել կաթը և մեծացնել հորթերը։

ժա) Ավագ ձիապանի կամ յեզնապանի (բրիգադիրի) պարտականությունները

Հետևել շարքային ձիապանների կամ յեզապանների աշխատանքին։ Պատասխանատվություն ձիերի կամ յեզների առողջության ու աշխատունակության համար, հետևել ձիերի ուղիղ պայտելուն, պատասխանատվություն ինվենտարի անվնասության համար, ստանալ, պահպանել և տալ կերը, աշխատանքի թողնել ձիերին կամ յեզներին, հետևել լծասարքին և տրանսպորտին ու բեղմնավորել անասուններին։

ժբ) Ձիապանի կամ յեզպանի պարտականությունները

Բերել և պատրաստել կերը, կերակրել և ջրել ձիերին կամ յեզներին, մաքրել ձիերին ու շենքերը, խնամել լծասարքը, ինվենտարը և ձիերի սմբակները։

ժգ) Հովիվի պարտականությունները

Պատասխանատվություն հոտի դրության համար։ Նշանակված ժամանակին հոտն արածելու տանել ու հետ բերել, միջոցներ ձեռք առնել վորքան կարելի է լրիվ ոգտագործելու արոտները, թույլ չտալ, որ անասունները կորչեն, բեղմնավորել և հետևել ծնելուն՝ անասնապահի ցուցմունքներով։

ժդ) Հովվի ոգնականի պարտականությունները

Ոգնել հովվին և աշխատել նրա ղեկավարությամբ ու ցուցմունքներով։

VII ԳՈՒՅՔԻ ԳՈՅԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ ՀԱՄԱՅՆԱՑՐԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ—ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻՑ ԴՈՒՐՍ ԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

20. Համայնացրած գույքը՝ համաձայն կանոնադրության՝ կազմվում է.—

ա) մուտքի վճարից,

բ) այն գույքից, վոր արտելի անդամը մըտցնում է թե անբաժանելի ֆոնդի և թե փայի կապիտալի մեջ,

գ) այն գույքից, որ ձեռք է բերվում արտելի ընդհանուր միջոցներով,

դ) այն գույքից, վոր պետական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունները տալիս են արտելին՝ մշտապես ոգտագործելու համար։

21. Արտելի համայնացրված գույքը՝ վարչության հայեցողությամբ պահ է տրվում կամ գյուղատնտեսական արտելի վորոշ անդամին, վորը վարում է գույքը աշխատանքի համար բաց թողնելու գործը, կամ գյուղատնտեսական արտելի առանձին անդամներին՝ անտեսության համապատասխան ճյուղի վարիչի հսկողության տակ։ Հիշած գույքը պահելու համար արտելը շինում է համապատասխան շենքեր։

22. Գույքը պահելիս՝ այդ գործը տանող անձը պարտական է հսկել նրա անվնաս և լիակատար սարքին մնալուն ու նորոգման անհրաժեշտության դեպքում ժամանակին հայտնել վարչությանը։

23. Լծկանները, ինվենտարը և լծասարքը տրվում են կոլխոզնիկներին դրսի աշխատանք-

ների համար միայն այն ժամանակաշրջաններում, յերբ ազատ են ներքին աշխատանքներից։

Կոլխոզնիկը՝ բանվոր անասուններին իր սեփական կարիքների համար (բազար, հիվանդանոց, բարեկամների մոտ գնալու, անտեսությանը մոտ գտնվող հողերը մշակելու համար անասուններն ու ինվենտարը գործադրելիս) պետք է բանեցնի վարչության սահմանած կանոններով՝ համաձայն արտելի կանոնադրության և հաստատված ընդհանուր ժողովի կողմից։

VIII ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

24. Արտելի բանվորական ուժը լիովին ոգտագործելու և կանանց իրահավասարությունը գործնականորեն—արտելային արդյունաբերության մեջ մասնակցելով—իրագործելու համար՝ բոլոր աշխատունակ կանայք աշխատանքի են քաշվում։

25. Գյուղատնտեսական աշխատանքների լարված ժամանակաշրջաններում՝ կանանց բանվորական ուժը տնային տնտեսությունից ազատելու համար՝ արտելն իր միջոցներով և ուժերով կազմակերպում է մանկամատուներ, մանկական հրապարակներ և հասարակական սնունդ։

26. Արտելի վարչությունը՝ կոլխոզի տնտեսության ուղղության համաձայն՝ կանանց աշխատանքն առաջին հերթին պետք է ոգտագործի հետևյալ գործերում՝ ա) բամբակի, կենտավի և այլ տեխնիկական բույսերի քաղհանի և բերքը հավաքելու գործում, բ) հատապտուղներ, խաղող, խնձոր և այլ մրգեր ու արմատապտուղներ, նաև բանջարանոցների ու բախչաների բերքը հավաքելու և չորացնելու գործում, գ) խոտը

հավաքելու և դիզելու, յեգիպտացորենը, արևածաղիկը, կարտոֆիլը, ծխախոտը և այլն հավաքելու գործում, դ) թռչունները խնամելու և բազմացնելու աշխատանքներում (թռչնաբուծություն), յե) կաթնատու անասուններին խնամելու գործում, կթել, կաթնամթերքներ մշակել և հորթեր մեծացնել), զ) դաշտային աշխատանքների ժամանակ կոլլեկտիվ սնունդ պատրաստելու գործում և այլն։

27. Արտելի վարչությունը՝ բացի կանանց աշխատանքը գյուղատնտեսական գործերում ոգտագործելուց՝ կազմակերպում է նաև կարի, գորգագործության և այլ արհեստանոցներ՝ ապահովելով դրանք գլխավորապես տեղական հումքով։

29. Միատեսակ աշխատանքներ կատարելիս՝ կանանց աշխատանքը գնահատվում է տղամարդկանց աշխատանքի հավասար։

IX ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

29. Դեռահասները և յերեխաները մասնակից են արվում արտելի աշխատանքներին՝ արտադրական-ուսումնական և հանրոգուտ աշխատանքի կարգով։

30. Դեռահասների և յերեխաների աշխատանքի ոգտագործման կազմակերպումը տարվում է դպրոցի, կոմսոմոլի և պիոներկազմակերպության միջոցով։

31. Գյուղատնտեսական աշխատանքների լարված ժամանակաշրջաններում դեռահասները գրավվում են դաշտային աշխատանքների վրա՝ բանվորական [illegible] կատարելով աշխատանքի պաշտպանությանը վերաբերող միջոցառումները։

2458
14856-57
ՀՍՍՀ - ԽՍՌՄ
Ա. Մ. Գորկու անվան գրադարան

32. Վորակյալ աշխատողների կադրեր պատրաստելու համար՝ վարչությունը կազմակերպում է դեռահասներից բրիգադային և անհատական աշակերտություն թե կոլխոզի ներսում և թե մոտակա մեքենա-տրակտորային կայանում, սովխոզում ու արդյունաբերական ձեռնարկում։

X ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՎԵԼՑՈՒԿԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

33. ա) Գյուղատնտեսական արտելի այն անդամները, վորոնք ազատ են կոլխոզային աշխատանքներից, բաց են թողնվում աշխատելու սոցիալիստական արդյունաբերություններում և սովխոզներում՝ դրսում գործելու (ոտխոդնիչեստվո) կարգով, կամ ուղարկվում են բանվորական ուժի պակասություն զգացող ուրիշ կոլխոզներ։

բ) Դրսում գործելու կամ ուրիշ կոլխոզներ ուղարկվողները՝ իրենց կոլխոզից դուրս աշխատելու ամբողջ ժամանակի ընթացքում պահպանում են իրենց անդամակցությունը և դրանից բղխող բոլոր իրավունքները։

գ) Դրսում գործելու ուղարկվելը կատարվում է կազմակերպված կերպով. դրա համար արտելի վարչությունը պայմանագիր է կնքում աշխատանքի ռայոնական բաժանմունքի կամ անմիջապես տնտեսության հետ՝ բանվորական ուժ տալու մասին. սակայն դա չպիտի արգելի նաև անհատապես դրսում գործելու գնալը։

դ) Դրսում գործելու գնացածների աշխատանքից արվող հատկացումների չափը սահմանում է արտելի վարչությունը՝ 3-ից մինչև 10 տոկոսի սահմաններում։

Ծանոթություն.—Հատկացումների չափը սահմանելիս ամենափոքր տոկոսն է վորոշվում բատրակների, կարիք զգացվող պրոֆեսիա ունեցողների (որինակ կառուցողների), հեռավոր տեղեր գործի գնացողների և այլոց համար։

Արտելի վարչությունը՝ հատկացումների վորոշված չափի մասին դրսում գործելու գնացողներին տեղեկանք է տալիս՝ աշխատանքի տեղի տնտեսությանին ներկայացնելու համար։

34. ա) Գյուղատնտեսական արտելի սահմանից դուրս—մյուս կոլխոզներում աշխատելու համար կոլխոզնիկներն ուղարկվում են ռայոնական կոլխոզմիությունների կամ կոլխոզսեկցիաների կողմից՝ բանվորական ուժի կարիք զգացող կոլխոզների պահանջագրերի համաձայն։

բ) Կոլխոզում կատարած աշխատանքի վարձատրությունը տրվում է համաձայն կոլխոզների միջև յեղած պայմանի և լիովին հատուցվում է աշխատանքներն ավարտելուց հետո։

գ) Գյուղատնտեսական արտելի այն անդամները, վորոնք ուրիշ կոլխոզներն են ուղարկվում աշխատելու, իրենց աշխատածից վոչ մի հատկացում չեն անում իրենց արտելի ֆոնդերին։

35. Կոլխոզային աշխատանքներից ազատ արտելի անդամները բաց են թողնվում նույնպես քրեհատության համար՝ կոլխոզի համաձայնացրած անասուն տալով։

Այդ աշխատանքներից ստացած յեկամուտից կոլխոզնիկն իրեն է թողնում 80%, յեթե աշխատանքի ընթացքում անասունը նրա կերով է կերակրվում և 50%, յեթե անասունը կոլխոզի կերով է կերակրվում։

XI ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

36. Արտելի բոլոր աշխատանքներն իրենց բնույթով բաժանվում են հետևյալ խմբերի՝

թեթև,
միջակ,
ծանր,
վորակյալ.

37. Կոլխոզնիկի աշխատանքը տարվա ընթացքում գնահատվում և հաշվի է առնվում բացառապես պայմանական միավորներով—«աշխատորերով», վորը դրամական արտահայտության է փոխվում տնտեսական տարվա վերջին, յերբ վերջնականապես պարզվում են այն յեկամուտի գումարները, վոր պիտի բաժանվեն կոլխոզնիկների միջև։

38. Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և տրտադրական պլանների կատարումն ապահովելու համար՝ գյուղատնտեսական արտելում մտցրվում է աշխատանքի գործարքային (սդելնի) սիստեմը, թե խմբական և թե անհատական։

39. Աշխատանքի գնահատությունը կատարվում է գյուղատնտեսական արտելի կողմից ընդունված անելիքի նորմայի և գործարքային գնահատությունների հիման վրա՝ աշխատորերով։

Ծանոթություն.—Հետևյալ մասսայական աշխատանքներում գործարքային սիստեմը գործադրվում է պարտադիր կարգով՝ հերկ, ցաքանել, սկավառակել, կուլտիվացիա, ցանքս, կարտոֆել տնկել, բրել, նոսրացնել, ակոսել, բուկը լցնել, քաղհանել, հարել, հնձել, փխրել, կալսել, խուրձ կապել, բամբակաքաղ, ծխախոտի քաղ և պոզաքաղ։

40. Յեկամուտների մի մասը (բոլոր տնտեսական ծախսերը ծածկելուց և կանոնադրությամբ նախատեսված ֆոնդերը կազմելուց հետո) տնտեսական տարին վերջանալուց հետո բաժանվում է արտելի անդամներին թե փողով և

թե մթերքներով՝ բացառապես աշխատանքի քանակի և վորակի համաձայն։

Ծանոթություն.—Արգելվում է յեկամուտը բաժանել ըստ շնչերի, հողի և այլ վոչ աշխատանքային ձևերով։

41. Տարվա ընթացքում, յեթե կոլխոզն ունի դրամական միջոցներ և մթերքներ, կարիք զգացող կոլխոզնիկներին կարելի է տալ ավանսներ՝ տարվա վերջին յեկամուտները բաժանելիս այդ ավանսները դուրս գալով։

42. Աշխատանքի հաշվեառը կատարվում է տաբելներով՝ համաձայն Խորհրդային Աղբբեջանի Կոլխոզցենտրի տված ձևերի և հրահանգների։

XII ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ

43. Կանոնադրության պահանջներին, ընդհանուր ժողովների ու վարչության վորոշումներին չենթարկվելու և ներքին կարգավորման կանոնները խանգարելու համար՝ գյուղատնտեսական արտելի վարչությունը կարող է հետևյալ պատիժները տալ՝

1) հասարակական պարսավանք,
2) հանդիմանություն նախազգուշացումով,
3) փոխել ցածր գնահատվող աշխատանքի,
4) գործից հեռացնել, մինչև իսկ վռնդել արտելից՝ ընդհանուր ժողովի հաստատումով։

44. ա) Գործից ուշանալու, գործից ինքնակամ բացակայելու, գործը ժամանակից առաջ թողնելու և առանց հարգելի պատճառի պրոգուլ անելու համար՝ աշխատորերը դուրս են գալիս պրոգուլի ժամանակի համեմատ և տրվում է այս կամ այն պատիժը։

բ) Գործիքների հետ վարվելու կանոնները խախտելու, նախազգուշական միջոցառումները խախտելու, անասուններին ծեծելու և տանջելու, գործի ժամանակ քնելու, հակահրդեհային միջոցառումները չկատարելու, կրակի հետ անփույթ վարվելու և արգելված տեղերում ծխախոտ ծխելու, հարբած դրությամբ գործի գալու, գործիքներն, ինվենտարը, լծասարքը և կոլխոզի այլ գույքերը կոտրելու և փչացնելու, նույնպես և վարչության ներկայացուցիչների, աշխատանքների ղեկավարների ու բրիգադիրների օրինական կարգադրությունները չկատարելու համար՝

1) առաջին անգամ տրվում է 1-ին կամ 2-րդ պատիժը,

2) 2-րդ անգամ—3-րդ պատիժը,

3) 3-րդ անգամ—4-րդ պատիժը.

գ) կոլխոզային գույքը կոտրելու և փչացնելու համար մեղավորին բացի դիսցիպլինար պատիժ տալուց, նրանից առնվում է նաև նյութական հատուցում։

XIII ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

45. Աշխատանքային օրվա տևողությունը գյուղատնտեսական արտելում սահմանվում է,—

ա) չափահաս կոլխոզնիկների համար— 10 ժամ,

14—16 տարեկան դեռահասների համար—8 ժամ։

Ծանոթություն.—Գյուղատնտեսական աշխատանքների լարված ժամանակաշրջաններում, յեթե պակասում է բանվորական ուժը, չափահաս կոլխոզնիկների բանվորական օրը կարող է յերկարացվել, կրճատելով այն ավելի քիչ լարված ժամանակը։

Սնվելու և հանգստի համար ընդմիջումները սահմանվում են վարչության կողմից ու բանվորական ժամանակի մեջ չեն մտցրվում։

բ) Ֆիզիկական աշխատանքների տևողությունը՝ արտադրական—ուսումնական պրակտիկայի ժամանակ չպետք է անցնի՝

12-14 տարեկան յերեխաների համար—6 ժամից

8-12 » » » 4 »

46. ա) Մինչև 14 տարեկան յերեխաների աշխատանքը տնտեսական նպատակներով ոգտագործելը թույլ չի տրվում։

բ) 14-16 տարեկան դեռահասներն ոգտագործվում են թեթև աշխատանքների համար և գործարքային աշխատանքի թույլ չեն տրվում։

գ) Գյուղատնտեսական աշխատանքների լարված ժամանակաշրջաններում թույլ չի տրվում դեռահասների բանվորական օրը յերկարացնել։

դ) Թույլ չի տրվում մինչև 12 տարեկան յերեխաներին աշխատեցնել մեքենաների վրա, իսկ մինչև 15 տարեկաններին—տրակտորների վրա։

47. Կոլխոզնիկներին և նրանց ընտանիքներին բժշկական առաջին ոգնությունը հասցնելու համար գյուղատնտեսական արտելում սարքավորվում է տնային դեղարան և կոլխոզնիկներից կազմակերպվում է սանիտարական բջիջ, որն աշխատում է մոտակա բուժական կետի բժշկի ղեկավարությամբ և հսկողությամբ։

48. Գյուղատնտեսական արտելի աշխատանքները կատարելիս հիվանդացող, նույնպես և արտելի աշխատանքները կատարելու ժամանակաշրջանում՝ հաշմանալու, հիվանդության կամ ծերության հետևանքով աշխատունակությունը կորցրած կոլխոզնիկներին ոգնություն է ցույց տրվում անաշխատունակներին պահելու միջոց-

ների հաշվեն. այդ միջոցները կազմվում են տարվա վերջին՝ 5%-ային հասարակական ֆոնդից։

49. Գյուղատնտեսական արտելի աշխատանքներին մշտապես մասնակցող կոլտնտեսուհիները՝ հղիության դեպքում՝ գործից ազատվում են մի ամիս ծննդաբերությունից առաջ, մի ամիս էլ հետո. այդ ժամանակի համար նրանց ոգնություն է ցույց տրվում անաշխատունակներին ոգնելու միջոցներից։

XIV. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ

50. Ներկա որինակելի կանոնները, նույնպես և բոլոր փոփոխություններն ու լրացումները քննվում և հաստատվում են գյուղատնտեսական արտելի անդամների ընդհանուր ժողովում։

Կանոնները պետք է հայտարարվեն արտելի բոլոր անդամներին ու աշխատողներին և կախվեն աչքի ընկնող տեղում։

51. Ներքին կարգավորման ներկա կանոնները կատարելուն հսկելը հանձնարարվում է՝ արտադրության մեջ—բրիգադիրին կամ տնտեսության ճյուղի վարիչին, իսկ ընդհանուր կարգով—արտելի վարչության անդամներին և նախագահին։

[redacted]
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ — СССР
им. А. Мнемяна
Հ. ԴԱՍՏԱՄԱՆՅԱՆ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203254

30.555

ПРАВИЛА
внутреннего распорядка в сель.-хоз. артелях А. С. С. Р.

АЗЕРНЕШР
Баку—1931